

9424



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

« 03 » 09 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 180 - 24

Նախաձեռնող՝

«ԱՐԳՈՄ» ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր, Նիկոլ Դուման/33

Գործունեությունը՝

Սուրենավանի միկրոբրեկչիաների/միկրոփշրաքարերի/  
և կրաքարերի հանքավայրի արդյունահանման  
աշխատանքներ

Արարափի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 180 - 24

«03» սեպտեմբեր 2024թ.

**Սուրենավանի միկրոբրեկչիաների/միկրոփշրաքարերի/ և կրաքարերի  
հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԱՐԳՈՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեությունը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Վեդի համայնք, Լանջանիստ բնակավայր

**Ներածական մաս.** «ԱՐԳՈՄ» ՍՊԸ ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել Արարատի մարզի Սուրենավանի միկրոբրեկչիաների/միկրոփշրաքարերի/ և կրաքարերի արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է ընկերությանը տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110 օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Սուրենավանի միկրոբրեկչիաների /միկրոփշրաքարերի/ և կրաքարերի հանքավայրը գտնվում է Արարատի մարզի Լանջանիստ բնակավայրի սահմաններում: Մոտակա բնակավայրերն են՝ Ուրցաձորը՝ 11 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Շաղափը՝ 3,8 կմ հյուսիս-արևմուտք, Լանջանիստը՝ 4,7 կմ հյուսիս-արևելք, Լուսաշողը՝ 6,1 կմ արևելք, Լանջառը՝ 6,1 կմ հարավ-արևելք, Վեդի քաղաքը՝ 17 կմ հյուսիս-արևմուտք: Հանքավայրից 2,3 կմ արևելք անցնում է Վեդի-Արենի-Եղեգնաձոր ասֆալտապատ ճանապարհը, հանքավայրը նշված ճանապարհի հետ կապված է միջդաշտային ասֆալտապատ և մասամբ գրունտային ճանապարհով, Շաղափ-Լանջանիստ ասֆալտապատ ավտոճանապարհը գտնվում է մոտ 2,3 կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքից դեպի հարավ-արևմուտք՝ մոտ 450 մ հեռավորության վրա է գտնվում Սուրբ Կարապետ վանքը: Վանքի և հանքավայրի տեղադիրքերի բարձրությունը նիշերի տարբերությունը կազմում է ավելի քան 50 մ: Հանքավայրը տեղադրված է բլրի հակառակ կողմում և վանքից հանքավայրը տեսանելի չէ: Գյուղատեղին գտնվում է մոտ 950 մ դեպի հարավ, իսկ մոտակա ձորակը՝ մոտ 250 մ հեռավորության վրա:





Հանքավայրի շրջանը մտնում է Հայաստանի ծալքա-բեկորային օրոգրաֆիկ գոտու մեջ:

Սուրենավանի հանքավայրը գտնվում է 1790-1910 մ բացարձակ բարձրությունների վրա:

Հանքավայրի լիթոլոգիական կտրվածքը ներկայացված է վերևից ներքև՝ վերին դևոնի, ստորին կարբոնի, ստորին պերմի նստվածքներով:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ հանքավայրի տարածքում բացակայում են ստորերկրյա ջրերը և սողանքային մարմինները: Հանքավայրի տարածքում չկան կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակներ, խոշոր կաթնասունների բներ/որջեր, տարածքը առնչություն չունի բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության, պատմամշակութային հուշարձաններ հետ:

Մթնոլորտային տեղումների մի մասը բացահանքի շահագործման ժամանակ կհեռանա ինքնահոս կերպով, իսկ մյուս մասը կներծծվի բացահանքի հատակի ապարների ճաքերի միջով:

Հանքավայրի տարածքը զուրկ է բուսական ծածկույթից, քանի որ կրաքարերի մակերեսին հողաբուսական շերտ չի ձևավորվել:

Օգտակար հաստվածքի մակերեսի զգալի հատվածը ծածկված է 1.0-3.2 մ հզորությամբ հողմահարված կրաքարերի շերտով:

Սուրենավանի հանքավայրի օգտակար հանածոն ներկայացված է երկու տարատեսակներով՝ մարմարացված միկրոփշրաքարերով և մարմարացված կրաքարերով:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 16.11.1983թ.-ի N 9346 արձանագրությամբ՝ բաց եղանակով շահագործման պայմաններում:

Սուրենավանի հանքավայրի օգտակար հանածոն պիտանի է բլոկների արդյունահանման համար և բավարարում է «Բլոկներ բնական քարերից, երեսապատման իրերի արտադրության համար» ԳՈՍՏ 9479-20 76-ի և «Երեսապատման սալիկներ կտրված բնական քարերից» ԳՈՍՏ 9480-77-ի, ճաքճված միկրոփշրաքարերից և կրաքարերից, ինչպես նաև արտադրական թափոններից դեկորատիվ խճի ստացում՝ համապատասխան «Դեկորատիվ խիճ և ավազ բնական քարերից» ԳՈՍՏ 22856-77-ի պահանջներին:

Հանքավայրի աշխարհագրական կոորդինատներն են՝

հյուսիսային լայնության՝ 39° 50/ 48//

արևելյան երկայնության՝ 44° 54/ 34//

Հայցվող տարածքի կոորդինատները (ըստ Arm WGS-84 համակարգի) հետևյալն են.

1. Y=8492266.0000 X=4412571.0000

2. Y=8492256.1463 X=4412567.8408

3. Y=8492173.3403 X=4412688.3407

4. Y=8492373.5920 X=4412878.9661

5. Y=8492438.0000 X=4412819.0000

Նախատեսվում է բացահանքի հանքարդյունահանման աշխատանքները կատարել բաց լեռնային աշխատանքներով, մեխանիկական եղանակով 5 մ բարձրությամբ աստիճաններով /2 հատ 2.5 մ բարձրությամբ ենթաստիճաններով/: Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից՝ հանքաշերտի մշակման աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական, միակողանի, ընթացքաշերտերով խորացող մշակման համակարգով:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – 310 մ,

- առավելագույն լայնությունը – 140 մ,





- մշակման առավելագույն խորությունը – 78 մ,
- օտարման մակերեսը – 3.4 հա,
- հանքաստիճանի բարձրությունը վերջնական դիրքում – 5 մ,
- հանքաստիճանի թեքությունը հորիզոնի նկատմամբ - 90°,
- անվտանգության բերմայի լայնությունը – 2 մ,
- բացահանքի կողի առավելագույն թեքությունը - 69°:

Օգտակար հանածոների հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է 1271600 մ<sup>3</sup>, /ըստ B կարգի՝ 378290 մ<sup>3</sup>, ըստ C1 կարգի՝ 893310 մ<sup>3</sup>/: Այդ թվում՝ միկրոփշրաքարեր՝ 778600 մ<sup>3</sup>, /ըստ B կարգի՝ 207438 մ<sup>3</sup>, ըստ C1 կարգի՝ 571162 մ<sup>3</sup>/: Ճաքճքված միկրոփշրաքարեր և կրաքարեր՝ 493000 մ<sup>3</sup> /ըստ B կարգի՝ 136376 մ<sup>3</sup>, C1 կարգի՝ 356624 մ<sup>3</sup>/:

Մակաբացման ապարների քանակը կլինի 127440 մ<sup>3</sup>, այդ թվում՝ բերվածքային ապարներ՝ 40775 մ<sup>3</sup>, փուշտա՝ 86665 մ<sup>3</sup>:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կկազմի 55000 մ<sup>3</sup> /միկրոփշրաքարեր, ճաքճքված միկրոփշրաքարեր, կրաքարեր/:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 19.57 տարի:

Նախատեսվում են հետևյալ արդյունահանման աշխատանքները՝ միաքարի անջատում զանգվածից, միաքարի հեռացում հանքախորշից, միաքարի մասնատում բլոկների և դրանց կոպտամշակում, բլոկների բարձում տրանսպորտային միջոցների մեջ, թափոնների հեռացում:

Բացահանքային դաշտի 1880-1835 մ նիշ ունեցող հանքաստիճանների բացումը կիրականացվի բացահանքի հյուսիս-արևմտյան մասից մոտեցող գրունտային ավտոճանապարհի 1800 մ նիշ ունեցող հորիզոնից դեպի 1880 մ նիշ ունեցող հանքաստիճան գրունտային ճանապարհի անցումով, որից կկատարվի հորիզոնական կտրող կիսախրամի անցում: Գրունտային ճանապարհի առավելագույն թեքությունը կկազմի 100%<sub>00</sub>:

1830-1810 մ նիշ ունեցող հանքաստիճանների բացումը կիրականացվի նույն մոտեցող գրունտային ճանապարհից ներքին թեք խրամների համակարգով:

Ապարների արդյունահանումը կկատարվի հակառակ բահ էքսկավատորի միջոցով՝ ներքևի շերտիմամբ: Կտրող խրամների կառուցումը /անցումն/ կիրականացվի բուլդոզեր, էքսկավատոր, ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Միկրոփշրաքարերի /այդ թվում բլոկների /ճաքճքված միկրոփշրաքարերի և կրաքարերի տեղափոխումը կիրականացվի սպառողների ավտոինքնաթափերով:

Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ ընդհանուր նախագծային կորուստները կկազմեն՝ 197610 մ<sup>3</sup> կամ 15.54%, այդ թվում՝ միկրոփշրաքարեր՝ 141045 մ<sup>3</sup> կամ 18.1%, ճաքճքված միկրոփշրաքարեր և կրաքարեր՝ 53565 մ<sup>3</sup> կամ 10.8%, որոնք հիմնականում մնում են բացահանքի կողերի պահպանիչ բնամասերում: Շահագործման կորուստները՝ արդյունահանման տեխնոլոգիայից կկազեն 0,5%:

Բացահանքում մակաբացման ապարները են՝ բերվածքային ապարները և փուշտան:

Լցակույտային ապարները մինչև բացահանքի շահագործման 1825 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը կտեղադրվեն ժամանակավոր արտաքին լցակույտում: 1825 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց /շահագործման 16.7 տարուց սկսած/ կիրականացի ներքին լցակույտաառաջացում:

Արտաքին ժամանակավոր լցակույտում կտեղադրվեն 127440 մ<sup>3</sup> մակաբացման ապարներ (այդ թվում բերվածքային ապարներ՝ 40775 մ<sup>3</sup>, փուշտա՝ 86665 մ<sup>3</sup>):

Բերվածքային ապարները կպահեստավորվեն լցակույտի արևմտյան մասում, իսկ փուշտան՝ լցակույտի արևելյան մասում: Արտաքին լցակույտի մակերեսը կկազմի 3 հա,





վերին հարթակի մակերեսը՝ 1.0 հա, շեպի թեքման անկյունը՝ 33-350, բարձրությունը՝ 40 մ:

Ներքին լցակույտում կփոփեն և կհարթեցվեն փուշտաշերտի ապարները, իսկ դրանց վրա բերվածքային ապարները: Ներքին լցակույտի զբաղեցրած տարածքը կկազմի 2.57 հա:

Լցակույտառաջացումը կիրականացվի բուլդոզերային եղանակով:

Բացահանք ջրամատակարարում կիրականացվի, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը և մուտքային ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու և խմելու ջրով ապահովելու համար: Տեխնիկական ջրամատակարարումը կկատարվի ZIL MMZ-4502 մակնիշի ջրցան ավտոմեքենայով, խմելու ջրի մատակարարումը՝ ջրի կցիչ ցիստեռնով:

Սուրենավանի միկրոբրեկչիաների/միկրոփշրաքարերի/ և կրաքարերի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնածին ճնշումներ կդրսևորվեն շրջակա միջավայրի բնական բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, օդային ավազան, կենսաբազմազանություն) վրա:

Հայցվող տարածքում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության աղբյուրներ կհանդիսանան բացահանքը, սպասարկման ճանապարհներ, արտադրական հրապարակ, լցակույտը, հնարավոր ազդեցությունները կլինեն՝ հողի աղտոտումը, անօրգանական փոշու և գազերի առաջացումը, աղմուկը և վիբրացիան, նավթամթերքների արտահոսքերը, կենցաղային աղբը և այլն:

Փոշեգոյացում տեղի կունենա նաև բացահանքի սահմաններում և բացահանքից դուրս՝ ավտոճանապարհներին: Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր կհանդիսանան կիրառվող ավտոտրանսպորտից գազերի և փոշու արտանետումները, փոշեգոյացման աղբյուր կհանդիսանան նաև մակաբացման, օգտակար հանածոյի արդյունահանման, լցակույտառաջացման աշխատանքները:

Համաձայն գնահատման հաշվետվության աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատասխանաբար կազմում է 5մգ/մ<sup>3</sup>, 0.2մգ/մ<sup>3</sup>, 0.15մգ/մ<sup>3</sup> և 0.5մգ/մ<sup>3</sup> և հանքավայրի տարածքում վնասակար գազերի առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցի նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում «Эко Центр» ծրագրով կատարվել է նաև արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկ, որի արդյունքների համաձայն արտանետվող բոլոր նյութերի համար գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում տվյալ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Ջրային ավազան՝ ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Նախատեսվող արդյունահանման աշխատանքների ընթացքում հողային ռեսուրսների աղտոտվածության հիմնական աղբյուրներ կհանդիսանան բացահանքը, մակաբացման ապարների լցակույտերը, աշխատանքների իրականացման արդյունքում կխախտվեն արտադրական հրապարակի, բացահանքի, լցակույտերի և ճանապարհների համար օգտագործվող տարածքները:





Որոշակի բացասական ազդեցությունը կդրսևորվի բնական լանդշաֆտի վրա, տարածքի կենսաբազմազանության վրա արդյունահանման ազդեցությունը կլինի նվազագույն:

Բացահանքի շահագործման ընթացքում ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝ 6950.155 ՀՀ հազ. դրամ/տարի:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորով փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները /մետաղաջարդոնները/ և կենցաղային աղբը, մակաբացման ապարները: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածկագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն կհանդիսանան՝ բացահանքը, ավտոտրանսպորտը, քանի որ ավտոտրանսպորտի երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է՝ աղմուկի մակարդակը բարձր չէ լինի: Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը LAէկվ կսահմանվի 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի), աղմուկի մակարդակը գիշերային ժամերին կգտնվի նորմերի սահմաններում և կկազմի 32ԴԲԱ (նորման 35ԴԲԱ): Հաշվի առնելով աշխատող մեխանիզմների տեսակները, աշխատանքների բնույթը, հեռավորությունը մոտակա բնակավայրից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը և թրթռումների մակարդակը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից շատ ցածր:

Քանի որ հանքավայրի հարակից տարածքներում՝ մոտ 2-2.5 կմ շառավղով, բացակայում են գումարային ազդեցություն առաջացնող գործունեություններ, հանքավայրի շահագործման ընթացքում գումարային ազդեցություններ չեն առաջանա:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումները, որոնք են՝

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին կտրվի համապատասխան թեքություն, ինչն էլ կապահովի թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, հետագայում դատարկում հատուկ ծառայության միջոցով,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,
- արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի (ծխագազերի ֆիլտրներ) տեղադրում:
- փոշենստեցման նպատակով արտադրական հրապարակի ջրում տարվա ջրում ցող եղանակներին,





- տեխնոլոգիական սարքավորումների վիբրոմեկուսացում, սարքավորումների վրա ձայնամեկուսիչ ծածկոցների օգտագործում՝ կենդանական աշխարհի համար անհանգստության աղբյուր հանդիսացող թրթռումների վնասվածքից համար և այլն:

Նախատեսվում են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, հակավթարային, արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների, կենսաբազմազանության, կենդանիների պահպանության, վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրությունների և այլ բնապահպանական միջոցառումներ, որոնք առավել մանրամասն նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Որպես այլընտրանքային՝ Սուրբ Կարապետ վանքը շրջանցող ճանապարհներ նախատեսվում է օգտագործել միջդաշտային գոյություն ունեցող ճանապարհը, համաձայն գնահատման հաշվետվության, որպես վանքի պահպանության միջոցառում՝ նախատեսվում է վանքի եզրագծով իրականացնել երկշերտ ծառատունկ՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով՝ համաձայնեցնելով համայնքապետարանի հետ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների իրականացման համար տարեկան նախատեսվում է մասնահատել 150000 հազ. ՀՀ դրամ:

Ըստ գնահատման հաշվետվության՝ նախատեսվում է նաև ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում սկսած 11-րդ տարվանից՝ ներքին լցակույտում փուշտաշերտի ապարների փոում և հարթեցում, ապա դրանց վրա բերվածքային ապարների փոում, բացահանքի հատակի մակերեսը կկազմի 2.57 հա: Բացահանքի հատակի մակերեսից բացի կռեկուլտիվացվեն նաև արտադրական հրապարակի մակերեսը՝ 0,035 հա, ավտոճանապարհի մի հատվածը 0,118 հա: Ընդհանուր ռեկուլտիվացվող մակերեսը կկազմի 2.723 հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո կիրականացվի նաև կենսաբանական ռեկուլտիվացիա, որի իրականացման համար նոր հողային ծավալների ձեռքբերում չի նախատեսվում, կընտրվեն տարածաշրջանին բնորոշ սերմեր, աշխատանքների արժեքը կկազմի 272300 ՀՀ դրամ:

Ընդհանուր ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 2039900 ՀՀ դրամ, ինչը, Կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի N1733-Ն որոշմամբ, կհատկացվի շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին:

Սուրենավանի միկրոբրեկչիաների և կրաքարերի հանքավայրի շահագործման ընթացքում կիրականցվեն շրջակա միջավայրի բաղադրիչների վրա բացասական ազդեցության կանխարգելմանը, մեղմացմանն ուղղված մշտադիտարկումները՝

1. բացահանքի տարածքում մթնոլորտային օդ արտանետվող՝ աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ մայիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին), օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
2. հողային ծածկույթի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ արտադրական հրապարակում, հանքի տարածքում՝ տարեկան մեկ անգամ:
3. վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջանում մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ հանքի տարածքում՝ ամսական մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահատել 150 հազ. ՀՀ դրամ:





**Պարճառաքանական մաս.** Արարատի մարզի Սուրենավանի միկրոբրեկչիաների և կրաքարերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Լանջանիստ և Շաղափ բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:
2. Մինչև նախատեսվող գործունեությունը սկսելն անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական կառույցի կողմից իրականացնել հայցվող տարածքի հնագիտական ուսումնասիրություններ և արդյունահանման աշխատանքները սկսելիս՝ հաշվի առնել հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները:
3. Արդյունահանման աշխատանքներն իրականացնելիս օգտվել գոյություն ունեցող միջդաշտային ճանապարհից՝ շրջանցելով Սուրբ Կարապետ վանքը: Վանքի եզրագծով իրականացնել երկշերտ ծառատունկ՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով, համաձայնեցնելով համայնքապետարանի հետ, ինչը նախատեսված է հաշվետվությամբ:
4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների





արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

5. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

6. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/:

7. Հանքարդյունահանման աշխատանքներն իրականացնել հաշվետվությամբ նախատեսված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումներով՝ բացառելով պայթեցման աշխատանքները:

8. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԱՐԳՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Սուրենավանի միկրոբրեկչիաների/միկրոփշրաքարերի/ և կրաքարերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան